Զեկույց

Լիանա Գրիգորյանին դրամական աջակցություն ցուցաբերելու մասին

Սույն թվականի օգոստոսի 4-15-ը Արցախի հանրապետությունում գտնվող Վալլեքս Գարդեն հյուրանոցում նախատեսված Summer Business School 2019 համահայկական նախագծին Մասիս քաղաքից ներկայացուցիչ ապահովելու համար Մասիսի քաղաքապետարանին կից ուսանողական խորհուրդը առաջարկել է որպես թեկնածու՝ Լիանա Գիրգորյանի մասնակցությունը այդ նախագծին, որն աչքի է ընկնում իր ակտիվությամբ, ճկուն տրամաբանությամբ, նպատակասլացությամբ, օտար լեզուներին տիրապետելու հմտությամբ:

Նախագծին մասնակցության ընդհանուր գումարը կազմում է 299 000 դրամ: Լիանա Գրիգորյանը դիմել է քաղաքապետին 100 000 դրամի չափով աջակցության խնդրանքով:

Առաջարկվում է համայնքի ավագանուն թույլատրել սոցիալական հատուկ արտոնություններ ծրագրի այլ նպաստներում ուսանողներին ուսման վարձի փոխհատուցման համար նախատեսված միջոցներից Լիանա Գրիգորյանին հատկացնել 100 000 դրամի չափով աջակցություն:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Լ. Աստաբացյան

Աշխատակազմի առաջատար մասնագետ Ա. Մարտիրոսյան